

Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 128 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՔԱՂԱՔ ՍԵԱՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ 18-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ» - I ՓՈՒԼ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Սևանի և 10 շրջակա գյուղերի 18-ից բարձր տարիքի անձանց և հաշմանդամների կյանքի որակի բարելավումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 1 «Բողբոջ» մսուր մանկապարտեզի մասնաշենքում հիմնելով վերականգնողական կենտրոն և ստեղծելով անհրաժեշտ պայմաններ հաշմանդամների վերականգնման, գործունեության և սոցիալական ինտեգրման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ջինիշյան հիշատակի ծրագիր – ԱՄՆ (100 Ուիդերսփուն փողոց, Լուիսվիլ, Կենտուկի, ԱՄՆ, 40202)
4.	Ծրագրի կատարողը	«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ (քաղ. Երևան, Արվյան 34/5, ՀՎՀՀ՝ 00060436)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 1 «Բողբոջ» մսուր մանկապարտեզ՝ առողջապահության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	50,276,856 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի և շրջակա գյուղերի 18-ից բարձր տարիքի մոտ 150 հաշմանդամություն, ֆիզիկական և զարգացման խանգարումներ ունեցող անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մտոր մանկապարտեզի 300 քառակուսի մետր մակերեսով երկհարկանի մասնաշենքի հիմնովին վերանորոգում՝ 50,276,856 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 50,276,856 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր կազմակերպչական ծախսերը «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը կկատարի իր միջոցներով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ առողջապահության նախարարության, Գեղարքունիքի մարզպետարանի, Սևանի համայնքապետարանի, Սևանի բժշկական կենտրոն ՊՓԲԸ-ի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Համաձայն ՀՀ կառավարության 2003 թ-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական վերագրելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ